

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՍՏԱՆՊԱՐՏԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

**ԳԼՈՒԽ I
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

Հոդված 1. Օրենքի գործողության ոլորտը

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման գործունեության իրավական հիմքերը և դրա մասնակիցների իրավասությունը, ինչպես նաև կանոնակարգում է ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի մշակման և կիրառման սկզբունքները:

Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

ստանդարտացում՝ իրականում գոյություն ունեցող կամ հնարավոր խնդիրների վերաբերյալ համընդհանուր և բազմակի կիրառման համար դրույթների սահմանման միջոցով որոշակի բնագավառում կարգավորվածության լավագույն աստիճանին հասնելուն ուղղված գործունեություն,

ստանդարտ՝ փաստաթուղթ, որով սահմանվում են գործունեության տարբեր ծներին կամ դրանց արդյունքներին վերաբերող համընդհանուր և բազմակի կիրառման համար կանոններ, ընդհանուր սկզբունքներ կամ բնութագրեր՝ ուղղված որոշակի բնագավառում լավագույն կարգավորվածության ձեռքբերմանը, որը մշակվում է փոխհամաձայնության հիման վրա և հաստատվում ճանաչված մարմնի կողմից,

միջազգային ստանդարտ՝ ստանդարտացման միջազգային կազմակերպության կողմից ընդունված և հանրությանը հասանելի ստանդարտ,

տարածաշրջանային ստանդարտ (այդ թվում՝ եվրոպական և միջպետական)՝ ստանդարտացման տարածաշրջանային կազմակերպության կողմից ընդունված և հանրությանը հասանելի ստանդարտ,

ազգային ստանդարտ՝ ստանդարտացման ազգային մարմնի կողմից ընդունված և հանրությանը հասանելի ստանդարտ,

եվրոպական ստանդարտ՝ ստանդարտացման եվրոպական կազմակերպության կողմից ընդունված և հանրությանը հասանելի ստանդարտ,

միջպետական ստանդարտ՝ Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) երկրների ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման միջպետական խորհրդի (ՄՊԽ) կողմից ընդունված և հանրությանը հասանելի ստանդարտ,

ստանդարտացման կանոններ և ուղեցույցներ՝ փաստաթուղթ, որը բովանդակում է ստանդարտացման աշխատանքների կատարման վերաբերյալ կազմակերպատեխնիկական և/կամ ընդհանուր տեխնիկական դրույթներ, կարգեր, մեթոդներ, ինչպես նաև այդ աշխատանքների արդյունքների ձևակերպման ուղեցույցներ և կանոններ,

տեխնիկատնտեսական և սոցիալական տեղեկատվության դասակարգիչները՝ փաստաթուղթ, որով սահմանվում են դասակարգման օբյեկտների և դրանց ենթաբազմության կողերի ու անվանումների հավաքածուները,

տեխնիկական պայմաններ՝ տեխնիկական պահանջները սահմանող փաստաթուղթ, որին պետք է համապատասխանեն որոշակի արտադրանքը, աշխատանքը (այդ թվում՝ գործընթացը), ծառայությունը,

շահագրգիռ կողմ՝ ստանդարտացման գործընթացում շահագրգիռ կամ որևէ կերպ ներգործող ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ,

փոխհամաձայնություն՝ ընդհանուր համաձայնություն, որը բնութագրվում է շահագրգիռ կողմերի մեծամասնության միջև էական հարցերի վերաբերյալ լուրջ առարկությունների բացակայությամբ և ձեռք է բերվում բոլոր կողմերի կարծիքները հաշվի առնելուն ուղղված և ցանկացած վիճարկելի փաստարկների մոտարկման գործընթացի միջոցով: Փոխհամաձայնությունը պարտադիր չէ, որ ենթադրի լրիվ միակարծություն,

ստանդարտացման ազգային մարմին՝ պետության կողմից ձանաչված ստանդարտացման մարմին, որն իրավունք ունի ձանաչվելու որպես համապատասխան միջազգային կամ տարածաշրջանային ստանդարտացման կազմակերպության ազգային անդամ,

լիազորված պետական մարմին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմին,

ստանդարտացման ազգային համակարգ՝ նորմատիվ փաստաթղթերով կանոնակարգված ստանդարտացման աշխատանքների կազմակերպման և վարման փոխկապակցված կանոններ և դրույթներ,

պետական ստանդարտացման ամենամյա ծրագիրը՝ ծրագիր, որը մշակվում է պետական կառավարման մարմինների առաջարկությունների հիման վրա, հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ և ենթակա է պետական ֆինանսավորման,

ստանդարտացման ամենամյա ծրագիր՝ ծրագիր, որը մշակվում է Ստանդարտացման ազգային մարմնի կողմից ստանդարտացման ոլորտի շահագրգիռ կողմերի առաջարկությունների հիման վրա, ելնելով տնտեսության զարգացման, տնտեսության մեջ միջազգային նորարարական գիտելիքի և փորձի ներդրման անհրաժեշտությունից և առկա կարիքներից: Ստանդարտացման ամենամյա ծրագիրը ներառում է նաև պետական ամենամյա ծրագիրը և հաստատվում է Ստանդարտացման խորհրդի կողմից:

Հոդված 3. Ստանդարտացման նպատակները և օբյեկտները

1. Ստանդարտացման նպատակներն են՝

1) արտադրանքի, ծառայությունների և գործընթացների անվտանգության մակարդակի բարելավումը, մարդկանց առողջության ու կյանքի և շրջակա միջավայրի պաշտպանությունը,

2) արտադրանքների, գործընթացների և ծառայությունների որակի բարձրացման խթանումը,

3) աշխատուժի, նյութերի և էներգիայի արդյունավետ օգտագործման երաշխավորումը,

4) արտադրության, բազմագործառութային կառավարման արդյունավետության բարձրացումը, համատեղելիության և համափոխարինելիության երաշխավորումը,

5) միջազգային առևտրում տեխնիկական խոչընդոտների վերացումը,

6) գիտատեխնիկական առաջընթացի և նորարարության խթանումը,

7) չափումների միասնականության ապահովումը,

8) երկրի պաշտպանության ապահովումը,

9) տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանումը:

2. Ստանդարտացման օբյեկտներն են՝ արտադրանքը, աշխատանքը (այդ թվում՝ գործընթացը) և ծառայությունը:

Հոդված 4. Ստանդարտացման սկզբունքները

Ստանդարտացման ազգային մարմինը ապահովում է Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման գործունեության իրականացումը հետևյալ սկզբունքների համաձայն՝

1) ազգային ստանդարտների մշակման, ընդունման և կամավոր կիրառման գործընթացում բոլոր շահագրգիռ կողմերի կամավոր և հավասար մասնակցության իրավունքի պահպանումը,

2) շահագրգիռ կողմերի փոխհամաձայնության վրա հիմնված ազգային ստանդարտների մշակումը և ընդունումը,

3) ստանդարտացման գործընթացի բոլոր փուլերում աշխատանքների թափանցիկությունը և պատշաճ հանրային իրազեկումը,

4) ստանդարտացման գործընթացում շահագրգիռ կողմերի համընդհանուր շահերի նկատմամբ որևէ անձնական շահի գերիշխման կանխարգելումը,

5) ազգային ստանդարտների համապատասխանությունը միմյանց և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը,

6) գիտության և տեխնոլոգիայի համաշխարհային նորարարական, առաջադիմական նվաճումները, միջազգային՝ այդ թվում եվրոպական ստանդարտացման կանոնները և արդյունքները հաշվի առնելը,

7) միջազգային և տարածաշրջանային ստանդարտներին ներդաշնակ ազգային ստանդարտների մշակումը՝ հաշվի առնելով աշխարհագրական, կլիմայական և հիմնարար տեխնոլոգիական բնույթի տարբերությունների առկայությունը,

8) գործողության մեջ դրված ազգային ստանդարտների և դրանց փոփոխությունների պատշաճ ծանուցումը բոլոր շահագրգիռ կողմերին,

9) ստանդարտացման աշխատանքների իրականացումը տեխնիկական հանձնաժողովների միջոցով:

Հոդված 5. Ստանդարտացման հարաբերությունների իրավական կարգավորումը

Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով և այլ իրավական ակտերով:

Հոդված 6. Միջազգային պայմանագրերը

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանվում են ստանդարտացման գործունեությունը կարգավորող այլ դրույթներ, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են պայմանագրերի դրույթները:

ԳԼՈՒԽ II

ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Հոդված 7. Ստանդարտացման բնագավառում պետական քաղաքականությունը

Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման բնագավառում պետական քաղաքականությունը ձևավորում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը և հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

Հոդված 8. Ստանդարտացման գործընթացի մասնակիցները

Ստանդարտացման գործընթացի մասնակիցներն են՝ լիազորված պետական մարմինը, ստանդարտացման ազգային մարմինը, տեխնիկական կառավարման խորհուրդը, ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները, պետական կառավարման այլ մարմիններ, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմեր:

Հոդված 9. Լիազորված պետական կառավարման մարմինը

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը՝

1) մշակում և ապահովում է ստանդարտացման բնագավառում պետական քաղաքականության իրականացումը,

2) ապահովում է պետության կարիքների համար ստանդարտացման աշխատանքների ֆինանսավորումը,

3) Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում պետական ստանդարտացման ծրագիրը:

Հոդված 10. Ստանդարտացման ազգային մարմինը

1. Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ազգային մարմինը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

2. Ստանդարտացման ազգային մարմինը.

1) ընդունում և գործողության մեջ է դնում ազգային ստանդարտները,

2) դադարեցնում է ազգային ստանդարտների գործողությունը,

3) հաստատում և հրապարակում է ստանդարտացման ամենամյա ծրագիրը,

4) ստանդարտացման ազգային համակարգի ստանդարտներով սահմանում է ստանդարտացման աշխատանքների կատարման կազմակերպամեթոդական և ընդհանուր տեխնիկական կանոնները, ընթացակարգերը, ինչպես նաև միջազգային, տարածաշրջանային ստանդարտների և այլ պետությունների ազգային ստանդարտների կիրառման կարգը ազգային ստանդարտների կարգավիճակով ստանդարտացման ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին համապատասխան,

5) ստեղծում է ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները և համակարգում դրանց գործունեությունը,

6) ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը ստանդարտացման միջազգային կազմակերպություններում,

7) մասնակցում է միջազգային և տարածաշրջանային ստանդարտացման աշխատանքներին,

8) ստեղծում և վարում է ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդը,

9) իր ուսումնական կենտրոնի միջոցով իրականացնում է տեխնիկական կանոնակարգման, ստանդարտացման, չափագիտության և համապատասխանության գնահատման բնագավառներում մասնագետների համապատասխան ուսուցումը և վերապատրաստումը,

10) իրականացնում է ազգային, միջազգային, տարածաշրջանային ստանդարտների, ստանդարտացման բնագավառի կանոնների և ուղեցույցների և դրանց փոփոխությունների գրանցումը (հաշվառումը) և պատասխանատվություն է կրում դրանց պահպանման համար,

11) ապահովում է միջազգային, տարածաշրջանային և ազգային մակարդակներով ստանդարտացման բնագավառում տեղեկատվության փոխանակումը,

12) մատուցում է տեղեկատվական ծառայություններ,

13) կազմակերպում է ազգային, միջազգային և տարածաշրջանային ստանդարտների, կանոնների, ուղեցույցների, ինչպես նաև ամենամյա կատալոգների և եռամսյակային տեղեկատուների հրապարակումը և տարածումը,

14) կազմակերպում է միջազգային և տարածաշրջանային ստանդարտների փորձաքննությունը,

15) կանոնակարգող մարմնի հանձնարարությամբ նախապատրաստում և հրապարակում է տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանման ապահովող ստանդարտների ցանկը,

16) գործում է Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ազգային շահերից ելնելով,

17) ապահովում է ստանդարտացման միջազգային և տարածաշրջանային այն կազմակերպությունների կանոնների և պարտավորությունների կատարումը, որոնց անդամակցում է Հայաստանի Հանրապետությունը:

Հոդված 11. Կառավարման խորհուրդը

1. Կառավարման խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) Ստանդարտացման ազգային մարմնի կառավարման մարմինն է, որը կազմված է Խորհրդի նախագահից, 10 անդամներից՝ ստանդարտացման գերակա ոլորտներում ներգրավված շահագրգիռ 5 պետական կառավարման մարմինների և 5 ոչ պետական կազմակերպությունների ներկայացուցիչներից:

2. Խորհրդի անհատական կազմը սահմանում է լիազորված պետական կառավարման մարմինը:

3. Ստանդարտացման ազգային մարմնի տնօրենը հանդիսանում է Խորհրդի քարտուղարը և չի կարող հանդես գալ որպես Խորհրդի նախագահ:

4. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե ներկա են քվեարկության ծայնի իրավունք ունեցող Խորհրդի անդամների առնվազն 2/3-ը:

5. Խորհրդի նախագահը ընտրվում է Խորհրդի անդամների կողմից:

6. Խորհրդի նիստերը իրավիքով են ըստ անհրաժեշտության, բայց ոչ ուշ, քան եռամսյակը մեկ անգամ:

7. Խորհրդի նիստերի որոշումներն ընդունվում են նիստին ներկա գտնվող անդամների ծայների պարզ մեծամասնությամբ: Նիստին ներկա գտնվող անդամների ծայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ծայնը վճռորոշ է:

8. Խորհուրդը՝

1) ընդունում է որոշումներ Ստանդարտացման ազգային մարմնի գործունեության պլանավորման և գործունեության հետ կապված խնդիրների կանոնակարգման վերաբերյալ,

2) հաստատում է Ստանդարտացման ազգային մարմնի աշխատանքային ծրագրերը և հեռանկարային գործունեության հնգամյա ռազմավարությունները,

3) ստեղծում է աշխատանքային խմբեր՝ Ստանդարտացման ազգային մարմնի գործունեության հետ կապված հարցերի ուսումնասիրության և համապատասխան որոշումների նախապատրաստման համար,

4) դիմում է շահագրգիռ կողմերին՝ տարբեր հարցերի շուրջ կարծիք արտահայտելու խնդրանքով,

5) քննարկում է Ստանդարտացման ազգային մարմնի հաջորդ տարվա բյուջեի նախագիծը և ներկայացնում է առաջարկություն՝ այն լիազոր պետական կառավարման մարմնի հաստատմանը ներկայացնելու վերաբերյալ,

6) քննարկում, հաստատում և հրապարակում է Ստանդարտացման ազգային մարմնի գործունեության տարեկան արդյունքները,

7) սահմանում է ստանդարտացման բնագավառում պետական քաղաքականության իրականացման հեռանկարային ռազմավարությունը,

8) համապատասխան շահագրգիռ մարմինների և ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների առաջարկությունների հիման վրա ընդունում է ստանդարտացման ամենամյա ծրագիրը,

9) ապահովում է ստանդարտացման ազգային համակարգի համապատասխանությունն ազգային տնտեսության շահերին, նյութատեխնիկական բազայի ներկա վիճակին և գիտատեխնիկական առաջընթացին,

10) առաջարկություն է ներկայացնում ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների ստեղծման, լուծարման, դրանց կանոնադրության և աշխատանքային ծրագրերի ընդունման վերաբերյալ, համակարգում և իրականացնում է դրանց գործունեության ընթացաստուգումը, ինչպես նաև մեթոդական ղեկավարումը,

11) համակարգում է Հայաստանի Հանրապետությունում ազգային, միջազգային և տարածաշրջանային ստանդարտացման աշխատանքները՝ այդ աշխատանքների կատարմանն ընդգրկելով շահագրգիռ կողմերին, ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովներին և համապատասխան փորձագետներին,

12) հաստատում, հրապարակում և լիազորված պետական կառավարման մարմին է ներկայացնում հաշվետվություն Հայաստանի Հանրապետության ստանդարտացման ամենամյա ծրագրի կատարման վերաբերյալ.

13) իրականացնում է Ստանդարտացման ազգային մարմնի կանոնադրությամբ խորհրդին վերապահված այլ լիազորություններ:

Հոդված 12. Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները

1. Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովները ապահովում են ամրագրված գործունեության բնագավառում ազգային, միջազգային, տարածաշրջանային, միջպետական ստանդարտացման աշխատանքների կատարումը: Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովների կազմի մեջ ստանդարտացման ոլորտում իրենց շահերի նյութականացման նպատակով հավասարության և կամավորության հիմունքներով ընդգրկվում են ստանդարտացման ազգային մարմնի, պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, գիտահետազոտական ինստիտուտների, արհեստակցական միությունների, հասարակական կազմակերպությունների (միությունների), ձեռնարկատերերի ու սպառողների միավորումների, առևտրային ու ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև ֆիզիկական անձինք:

2. Ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովն ամրագրված գործունեության ոլորտին համապատասխան՝

1) ընդունում է ազգային ստանդարտների, ստանդարտացման կանոնների և ուղեցույցների նախագծերը և առաջարկություն ներկայացնում դրանք գործողության մեջ դնելու վերաբերյալ,

2) իրականացնում է ազգային, միջազգային և տարածաշրջանային ստանդարտների և դրանց փոփոխությունների մշակումը, ինչպես նաև նախապատրաստում է առաջարկություններ դրանց վերանայման, գործողության դադարեցման վերաբերյալ,

3) անցկացնում է միջազգային, տարածաշրջանային, ազգային ստանդարտների և դրանց փոփոխությունների նախագծերի փորձաքննություն,

4) մասնակցում է ստանդարտացման ծրագրերի ձևավորմանը,

5) մասնակցում է ստանդարտացման միջազգային և տարածաշրջանային տեխնիկական հանձնաժողովների (ենթահանձնաժողովների, աշխատանքային խմբերի) աշխատանքներին, նրանց քարտուղարությունների վարմանը՝ ստանդարտացման ազգային մարմնի և ստանդարտացման միջազգային (տարածաշրջանային) կազմակերպությունների միջև կնքված համաձայնագրերին համապատասխան,

6) կազմակերպում և իրականացնում է ամրագրված գործունեության բնագավառում, ստանդարտացման փաստաթղթերի փորձաքննություն՝ գիտության և տեխնիկայի արդի նվաճումներին համապատասխան՝ հաշվի առնելով ազգային տնտեսության վիճակը,

7) իրականացնում է իր կանոնադրությամբ և աշխատանքային ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ:

3. Համապատասխան ոլորտում գործող տեխնիկական հանձնաժողովի բացակայության դեպքում, ստանդարտի մշակման համար ստեղծվում է շահագրգիռ կողմերից բաղկացած աշխատանքային խումբ, որն իրականացնում է սույն հոդվածի 2-րդ կետով սահմանված գործառույթները:

Հոդված 13. Հայաստանի Հանրապետության ստանդարտացման փաստաթղթերը

1. Հայաստանի Հանրապետությունում կիրառվող ստանդարտացման փաստաթղթերն են՝

1) ազգային ստանդարտները,

2) ստանդարտացման կանոնները և ուղեցույցները,

3) միջազգային ստանդարտները,

4) տարածաշրջանային, այդ թվում՝ եվրոպական և միջպետական ստանդարտները:

2. Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերում սահմանված պահանջները պետք է հիմնված լինեն գիտության, տեխնիկայի և տեխնոլոգիայի ժամանակակից նվաճումների, միջազգային, տարածաշրջանային ստանդարտների, ստանդարտացման կանոնների և նորմերի վրա, հաշվի առնելով արտադրանքի օգտագործման, աշխատանքի կատարման և ծառայության մատուցման պայմանները, և չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

Հոդված 14. Ազգային ստանդարտները

1. Ազգային ստանդարտներն են՝

1) Հայաստանի Հանրապետության ստանդարտները, որոնք մշակվում և կիրառվում են հայերենով,

2) ստանդարտացման ազգային համակարգով սահմանված` Հայաստանի Հանրապետությունում ազգային ստանդարտի կարգավիճակով կիրառվող միջազգային, տարածաշրջանային և այլ պետությունների ազգային ստանդարտները:

2. Ազգային ստանդարտներով սահմանվում են պահանջներ և/կամ նորմեր` արտադրանքի, աշխատանքի և ծառայության անվտանգության, տեխնիկական և տեղեկատվական համատեղելիության, արտադրանքի համափոխարինելիության, արտադրանքի սպառողական (շահագործական) հիմնական բնութագրերի, փորձարկման մեթոդների, արտադրանքը փաթեթավորելու, մակնշելու, պահելու, փոխադրելու, օգտագործելու, վերականգնելու (նորոգելու) և օգտահանելու վերաբերյալ, ինչպես նաև դասակարգման օբյեկտների և դրանց ենթաբազմության կոդերի ու անվանումների հավաքածուներ:

Ազգային ստանդարտներով սահմանվում են նաև արտադրանքի մշակման, արտադրման և օգտագործման (շահագործման) տեխնիկական փաստաթղթերի ձևակերպման, արտադրանքի, աշխատանքի և ծառայության որակի ապահովման, միջոցների օգտագործման պահանջներ, ինչպես նաև տերմիններ, չափագիտական և այլ կազմակերպատեխնիկական և ընդհանուր տեխնիկական կանոններ:

3. Ազգային ստանդարտների համար կիրառվում է «ՀՍ» դասիչը: «Հայաստանի ազգային ստանդարտ» անվանումը և «ՀՍ» հապավումը պաշտպանվում են հեղինակային իրավունքների մասին օրենսդրությամբ և չեն կարող կիրառվել այլ տեսակի փաստաթղթերի համար:

4. Միջազգային, տարածաշրջանային և այլ պետությունների ազգային ստանդարտները ազգային ստանդարտի կարգավիճակով ընդունվում և կիրառվում են ստանդարտացման ազգային համակարգով սահմանված հավանության և վերահրատարակման մեթոդներով:

Հոդված 15. Ռազմական ոլորտի ազգային ստանդարտներ

Ռազմական արդյունաբերության արտադրանքի (աշխատանքի, ծառայության) ազգային ստանդարտների մշակման, ընդունման և կիրառման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 16. Ստանդարտացման փաստաթղթերի կիրառումը

1. Ստանդարտացման փաստաթղթերի կիրառումը որոշվում է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից` արտադրանքի մշակման, արտադրման, իրացման, օգտագործման (շահագործման), պահման, փոխադրման, օգտահանման, ինչպես նաև աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման փուլերում:

2. Ստանդարտացման փաստաթղթերը կիրառվում են գործող օրենսդրությունում, նորմատիվ իրավական ակտերում, պայմանագրերում, համաձայնագրերում և կազմակերպությունների փաստաթղթերում:

3. Ազգային ստանդարտների կիրառումը կամավոր է: Ստանդարտի կիրառումը դառնում է պարտադիր՝

1) բոլոր տնտեսավարող սուբյեկտների համար, եթե դա նախատեսվում է տեխնիկական կանոնակարգերով,

2) արտադրանք (աշխատանք, ծառայություն) արտադրողի (կատարողի, մատուցողի) համար, եթե կա հղում ստանդարտներին արտադրանքի (աշխատանքի, ծառայության) համապատասխանության հավաստման մասին փաստաթղթերում (սերտիֆիկացում կամ հայտարարագրում) կամ արտադրանքի մակնշվածքում և (կամ) շահագործման փաստաթղթում:

4. Միջազգային, տարածաշրջանային և այլ պետությունների ազգային ստանդարտները կիրառվում են միջազգային համագործակցության մասին համաձայնագրերի (պայմանագրերի) կամ ստանդարտացման ազգային մարմնի և համապատասխան միջազգային, տարածաշրջանային և այլ պետությունների ստանդարտացման ազգային մարմինների միջև կնքած համաձայնագրերի (պայմանագրերի) հիման վրա:

5. Ստանդարտը իրավական ակտ չէ:

Հոդված 17. Ազգային ստանդարտների մշակումը

1. Շահագրգիռ կողմերը կարող են առաջարկել ազգային ստանդարտների նախագծեր:

2. Ազգային ստանդարտների մշակումը ներառում է հետևյալ փուլերը.

1) ստանդարտի նախագծի և/կամ մշակման առաջարկի ներկայացում ստանդարտացման ազգային մարմնին,

2) ստանդարտի մշակման գործընթացի կազմակերպումը՝ տեխնիկական հանձնաժողովի կամ աշխատանքային խմբի միջոցով,

3) նախագծի առաջին խմբագրության մշակումը և դրա հրապարակային քննարկումը,

4) ազգային ստանդարտի նախագծի երկրորդ խմբագրության հրապարակային քննարկում,

5) ստանդարտի վերջնական նախագծի ընդունում տեխնիկական հանձնաժողովի (աշխատանքային խմբի) կողմից,

6) Ստանդարտացման ազգային մարմնի կողմից ստանդարտացման տեխնիկական խորհրդի եզրակացության հիման վրա ստանդարտի ընդունում և հրապարակում:

Հոդված 18. Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի վերաբերյալ տեղեկատվությունը և հրապարակումը, ազգային ֆոնդի ստեղծումը

1. Ազգային ստանդարտների, ստանդարտացման կանոնների և ուղեցույցների հրապարակման և տարածման (տրամադրման) իրավունքը պատկանում է ստանդարտացման ազգային մարմնին:

2. Ստանդարտացման միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների, որոնց անդամ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը, ստանդարտների հրապարակումը և տարածումը իրականացվում է ստանդարտացման միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների կողմից սահմանված կարգով և պայմաններով:

3. Այլ պետությունների ստանդարտների հրապարակումը և տարածումը իրականացնում է ստանդարտացման ազգային մարմինը այլ պետությունների ստանդարտացման կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերին (համաձայնագրերին) համապատասխան:

4. Ստանդարտների տրամադրումը պետական կառավարման մարմիններին իրականացվում է պետական պատվերի շրջանակներում:

5. Ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի պահպանման և դրանց վերաբերյալ տեղեկատվության ապահովման նպատակով ստեղծվում է ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի ազգային ֆոնդ, որը պարունակում է ազգային ստանդարտներ, դասակարգիչներ, տեխնիկական պայմաններ, միջազգային, տարածաշրջանային, միջպետական և այլ պետությունների ազգային ստանդարտներ, ստանդարտացման կանոններ և այլն:

ԳԼՈՒԽ III

ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 19. Ստանդարտացման աշխատանքների ֆինանսավորումը

1. Պարտադիր պետական ֆինանսավորման ենթակա են՝

1) ստանդարտացման ամենամյա պետական ծրագրով նախատեսված ազգային ստանդարտների մշակումը,

2) միջազգային համաձայնագրերով նախատեսված միջազգային, տարածաշրջանային և միջպետական ստանդարտների մշակումը կամ մասնակցությունը դրանց մշակմանը,

3) միջազգային և տարածաշրջանային ստանդարտացման կազմակերպություններին անդամակցության անդամավճարների մուծումը,

4) ստանդարտացման փաստաթղթերի ազգային ֆոնդի ստեղծումը և վարումը,

5) ստանդարտների տրամադրումը պետական կառավարման մարմիններին:

2. Ստանդարտացման աշխատանքների ֆինանսավորման այլ աղբյուրներ են հանդիսանում՝

1) ազգային ստանդարտների իրացումից ստացած միջոցները,

2) պայմանագրային հիմունքներով ստանդարտների մշակումից ստացած միջոցները,

3) սերտիֆիկացումից ստացած միջոցները,

4) օրենքով չարգելված այլ միջոցներ:

ԳԼՈՒԽ IV

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հողված 20. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Հայաստանի Հանրապետության կազմակերպություններում գործող տեխնիկական պայմանները որպես ստանդարտացման փաստաթուղթ մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ը պետք է փոխարինվեն ազգային ստանդարտներով կամ կազմակերպության ստանդարտներով կամ ուժը կորցրած ճանաչվեն: Մինչև համապատասխան ազգային ստանդարտների ընդունումը, կազմակերպությունների տեխնիկական պայմաններն ենթակա են փորձաքննության և հաշվառման ստանդարտացման ազգային մարմնում՝ համաձայն գործող ստանդարտացման կանոնների և ուղեցույցների:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության 1999 թ. նոյեմբերի 9-ի «Ստանդարտացման մասին» ՀՕ-8 օրենքը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Տեխնիկական կանոնակարգման մասին», «Հավատարմագրման մասին», «Ստանդարտացման մասին», «Չափումների միասնականության ապահովման մասին», «Համապատասխանության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ առաջարկությունների

h/h	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը	Առաջարկության վերաբերյալ եզրակացությունը
1	2	3	4	5
1.	<p>ՀՀ կառավարություն</p>	<p>«Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի նախագծի 21-րդ հոդվածի 7-րդ մաս և 28-րդ հոդված</p> <p>«Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքի նախագծի 23-րդ հոդված</p> <p>«Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մաս:</p>	<p>1. «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 21-րդ հոդվածի 7-րդ մասում և 28-րդ հոդվածում «օրենսդրությանը» և «օրենսդրությամբ» բառերը համապատասխանաբար անհրաժեշտ է փոխարինել «օրենքին» և «օրենքով» բառերով՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության 83.5-րդ հոդվածի և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները:</p> <p>Նույն դիտողությունը վերաբերում է նաև «Հավատարմագրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 23-րդ հոդվածին:</p> <p>2. «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 3-րդ մասում անհրաժեշտ է հստակեցնել «Չափագիտության ազգային մարմնի գիտական պահապաններ» հասկացությունը, մասնավորապես պարզ չէ, թե ովքեր են հանդիսանում հիշյալ ինստիտուտի գիտական պահապանները և ինչ կարգով պետք է պահպանվեն ազգային էտալոնները: Բացի այդ</p>	<p>Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>Կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>Նախագծի 2-րդ հոդվածում տրվել է «գիտական պահապաններ» հասկացությունը:</p>

			անհրաժեշտ է հստակեցնել «գիտական պահպաններ» հասկացության իրավական բովանդակությունը:	
2.	<p>«Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքի նախագծի</p> <ul style="list-style-type: none"> 9-րդ հոդված, 8-րդ մաս, 1-ին կետ <ul style="list-style-type: none"> 12-րդ հոդված <ul style="list-style-type: none"> 17-րդ հոդված <ul style="list-style-type: none"> 8-րդ գլուխ 24-րդ հոդված 	<p>«Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքի նախագծի.</p> <ul style="list-style-type: none"> 9-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետում «հիման վրա» բառերից հետո լրացնել «հավատարմագրման ազգային մարմնի ղեկավարի ներկայացմամբ» բառերը. <ul style="list-style-type: none"> 12-րդ հոդվածում լրացնել նոր՝ 3-րդ մաս հետևյալ բովանդակությամբ. «3. Համապատասխանության գնահատման մարմինները համապատասխանության գնահատման աշխատանքների իրականացման հայտերը ընդունում են էլեկտրոնային համակարգի միջոցով:», <p>17-րդ հոդվածի 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը» բառերը փոխարինել «խորհուրդը» բառով:</p> <p>8-րդ գլխում «ԵՎ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ» բառերը հանել:</p> <p>24-րդ հոդվածը հանել, եվ փոխել հաջորդ հոդվածի համարակալումը՝ ըստ</p>	<p>«Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքի նախագծի.</p> <ul style="list-style-type: none"> 9-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետում «հիման վրա» բառերից հետո լրացնել «հավատարմագրման ազգային մարմնի ղեկավարի ներկայացմամբ» բառերը. <ul style="list-style-type: none"> 12-րդ հոդվածում լրացնել նոր՝ 3-րդ մաս հետևյալ բովանդակությամբ. «3. Համապատասխանության գնահատման մարմինները համապատասխանության գնահատման աշխատանքների իրականացման հայտերը ընդունում են էլեկտրոնային համակարգի միջոցով:», <p>17-րդ հոդվածի 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմինը» բառերը փոխարինել «խորհուրդը» բառով:</p> <p>8-րդ գլխում «ԵՎ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ» բառերը հանել:</p> <p>24-րդ հոդվածը հանել, եվ փոխել հաջորդ հոդվածի համարակալումը՝ ըստ</p>	<p>Փոփոխությունը պայմանավորված է հավատարմագրման գործընթացի կազմակերպման անհրաժեշտությունից:</p> <p>Նշված փոփոխությունը պայմանավորված է 2011թ. դեկտեմբերի 22-ի ՀՀ կառավարության նիստում ընդունված «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրին հավանություն տալու և ՀՀ կառավարության 2010թ. դեկտեմբերի 9-ի N 1768-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված հավելվածի 2.1 կետի պայանջներին նախագծի համապատասխանեցմամբ:</p> <p>Փոփոխությամբ վերացվում է հակասությունը նախագծի 9-րդ հոդվածի 8-րդ մասի 8-րդ կետի և 17-րդ հոդվածի 1-ին մասի միջև:</p> <p>Փոփոխությունների անհրաժեշտությունը պայմանավորված է հավատարմագրման բնականոն գործընթացին խոչընդոտող գործոնի</p>

		<p>«Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի նախագծի.</p> <ul style="list-style-type: none"> • 8-րդ հոդվածի 4-րդ կետ • 9-րդ հոդվածի 7-րդ կետ • 9-րդ հոդվածի 8-րդ կետ 	<p>հերթականության:</p> <ul style="list-style-type: none"> • 8-րդ հոդվածի 4-րդ կետից հետո ավելացնել նոր ենթակետ հետևյալ խմբագրությամբ. «5) սահմանում է համապատասխանության գնահատման ընթացակարգերը.» • 9-րդ հոդվածի 7-րդ կետում «որոշում է ընդունում նշանակումը չեղյալ հայտարարելու վերաբերյալ» բառերի փոխարինել «որոշում է ընդունում նշանակումը կասեցնելու կամ չեղյալ հայտարարելու վերաբերյալ» բառերը, • 9-րդ հոդվածի 8-րդ կետից հանել «և հաստատում գրանցամատյանի վարման կարգը» բառերը, • 9-րդ հոդվածի 10-րդ կետում «համապատասխանության գնահատման 	<p>վերացմամբ, այսինքն՝ բացակայում է հավատարմագրման գործընթացը մինչև սույն թվականի հուլիսի 1-ը հետաձգելու անհրաժեշտությունը:</p> <p>Բոլոր փոփոխությունները կատարվել են համապատասխան N768/2008 և N765/2008 Եվրոպական կանոնակարգերի դրույթների պահանջների:</p> <p>Համապատասխանության գնահատման ընթացակարգի սահմանումը ՀՀ կառավարության կողմից անհրաժեշտ է համապատասխանության գնահատման գործընթացի ճիշտ կազմակերպման համար, ինչպես նաև այն բխում է N768/2008 Եվրոպական կանոնակարգերի դրույթների պահանջներից:</p> <p>N768/2008 Եվրոպական կանոնակարգերի դրույթների պահանջ:</p> <p>Նման ընթացակարգ սահմանված չէ ոչ N768/2008 և ոչ էլ N765/2008 Եվրոպական կանոնակարգերի:</p>
--	--	--	--	--

	<ul style="list-style-type: none"> • 9-րդ հոդվածի 10-րդ կետ • 9-րդ հոդվածի 11-րդ կետ • 20-րդ հոդված 	<p>նշանակված մարմինների բողոքարկման հանձնաժողովների» բառերը փոխարինել «համապատասխանության գնահատման մարմինների նշանակման բողոքարկման հանձնաժողովի անհատական կազմը,» բառերով</p> <ul style="list-style-type: none"> • 9-րդ հոդվածի 11-րդ կետում «և» բառից հետո գրել «նշանակված մարմինների կողմից տրվող», <p>20-րդ հոդվածի</p> <ul style="list-style-type: none"> • 1-ին մասից հանել «, եթե օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ» բառերը: • 2-րդ մասում «կարգով» բառը փոխարինել «ընթացակարգով» բառով: • 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. <p>«3. Համապատասխանության գնահատման մարմինը նշանակման համար համակարգող մարմնին ներկայացնում է հայտ, որին կցվում են համապատասխանության գնահատման գործունեության նկարագիրը, համապատասխանության գնահատման մեկ կամ մի քանի ընթացակարգերի անվանումները և մեկ կամ մի քանի արտադրանքի անվանումները, որոնց նկատմամբ համապատասխանության գնահատման մարմինը հայտարարում է իր տեխնիկական իրավասությունը, ինչպես նաև հավատարմագրման ազգային մարմնի կողմից</p>	<p>Փոփոխությունը պայմանավորված է նախատեսված բողոքարկման հանձնաժողովի անվանումը հստակեցնելու անհրաժեշտությամբ:</p> <p>Համապատասխանության գնահատման նշանակված մարմինների կողմից ներկայացվող համապատասխանության սերտիֆիկատի ձևը պետք է տարբերվի համապատասխանության գնահատման մարմնի կողմից ներկայացվող համապատասխանության սերտիֆիկատի ձևից, որը հաստատվում է հավատարմագրման ազգային մարմնի կողմից:</p> <ul style="list-style-type: none"> • N768/2008 Եվրոպական կանոնակարգի նախաբանի 41-րդ կետն է:
--	--	---	--

		<ul style="list-style-type: none"> • 23-րդ հոդված, 2-րդ մաս • 23-րդ հոդված, 4-րդ մաս • 25-րդ հոդվածի 3-րդ մաս 	<p>տրված հավատարմագրման վկայագիր:»:</p> <ul style="list-style-type: none"> • 5-րդ մասը հանել և փոխել համարակալումը՝ ըստ հաջորդականության: • 7-րդ (նախկին 8-րդ) մասում «որակի և տեխնիկական կանոնակարգման ազգային խորհուրդ» բառերը փոխարինել «համապատասխանության գնահատման մարմինների նշանակման բողոքարկման հանձնաժողով» բառերով: • 8-րդ (նախկին 9-րդ) մասում «Որակի և տեխնիկական կանոնակարգման ազգային խորհրդի առաջարկի կամ Հավատարմագրման տեխնիկական կոմիտեների ուսումնասիրության արդյունքի հիման վրա» բառերը փոխարինել «Օրենքին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ընթացակարգերին չհամապատասխանելու դեպքում» բառերով: • 23-րդ հոդվածի 2-րդ մասում «համակարգող մարմնի» բառերը փոխարինել «համապատասխանության գնահատման մարմինների նշանակման» բառերով: • 23-րդ հոդվածի 4-րդ մասում «Բողոքարկման հանձնաժողովների» բառերը փոխարինել «Համապատասխանության գնահատման նշանակված մարմնի համապատասխանության գնահատման բողոքարկման հանձնաժողովի» բառերով: • 25-րդ հոդվածի 3-րդ մասում «կիրառելիս» բառը փոխարինել «տրամադրելիս» բառով, • 25-րդ հոդվածում 3-րդ մասից հետո լրացնել նոր մաս հետևալ բովանդակությամբ. «4. Հայաստանի Հանրապետությունում համապատասխանությունը հավաստող համապատասխանության ազգային նշանը կարող է կիրառել միայն արտադրողը կամ 	<p>Փոփոխությունը պայմանավորված է նախատեսված բողոքարկման հանձնաժողովի անվանումը հստակեցնելու անհրաժեշտությամբ:</p> <p>Փոփոխությունը պայմանավորված է նախատեսված բողոքարկման հանձնաժողովի անվանումը հստակեցնելու անհրաժեշտությամբ:</p> <p>N765/2008 Եվրոպական կանոնակարգի 30-րդ հոդվածն է:</p>
--	--	--	--	---

		<ul style="list-style-type: none"> • 29-րդ հոդվածի 1-ին մաս 	<p>Հայաստանի Հանրապետությունում նրա լիազոր ներկայացուցիչը:»:</p> <p>29-րդ հոդվածի 1-ին մասում «կամ մասնակցությունը դրանց մշակմանը» բառերը հանել:</p>	<p>N765/2008 Եվրոպական կանոնակարգի 30-րդ հոդվածն է:</p> <p>N765/2008 Եվրոպական կանոնակարգի 34, 35-րդ հոդվածներն են:</p>
3.	ՀՀ կառավարություն	«Ստանդարտացման մասին» ՀՀ օրենքի նախագծի 11-րդ հոդված, 4-րդ մաս	11-րդ հոդվածի 4-րդ մասում «2/3 անդամ» բառերը փոխարինել «2/3-ը» բառերով:	Փոփոխությունը պայմանավորված է վրիպակը շտկելու անհրաժեշտությամբ:
4.	ՀՀ կառավարություն	«Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծ 29-րդ հոդված, 1-ին մաս	Օրենքի նախագծի 29-րդ հոդվածի 1-ին մասում «21-րդ» բառը փոխարինել «26-րդ» բառով:	Նշված փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված է վրիպակը շտկելու նկատառումներից: